

է ս. Պետրոսի տաճարում, որտեղ ներկայ է եղել 50,000 բաղմոնթիւն, իսկ եկեղեցուց դուրս կաարդացուել են բազմաթիւ դասախօսութիւններ ս. Գրիգորիոսի գործունէութեան և նրա ժամանակաշրջանին նուիրուած:

— Գերմանիայում յետուսեանները վերաբերեալ օրինաց § 2-դ յօդուածի (երկրորդ պարագրաֆի) ոչնչացումից յետոյ՝ համարեա անմիջապէս վերացուել են և նախարարական բաղմոնթիւ շրջաբերական կարգադրութիւններ, որոնք հրատարակուել էին Հռոմի դէմ մղած «կուլտուրական կռուի» ժամանակ և որոնց նպատակն էր եղել կաթոլիկ եկեղեցու ազդեցութեան սահմանափակումը դպրոցներում: Նոր կարգադրութեամբ իրաւունք է տրուում դպրոցներում կրօնական միութիւններ և համախմբումներ կազմակերպելու դպրոցական վարչութեան և կրօնուսուցչի հսկողութեամբ: Այսպիսով մինչդեռ Ֆրանսիայում Կոմբի նախարարութիւնը մաքառում է միաբանութեանց ազդեցութեան դէմ յատկապէս դպրոցներում, Գերմանիան հէնց մի միայն այդ հանգամանքից օգուտ քաղելու նպատակաւ նորանոր իրաւունքներ է տալիս կաթոլիկ եկեղեցուն նրա աջակցութիւնն իւր կողմն ունենալու և իւր քաղաքական ազդեցութիւնը կաթոլիկների վրայ աւելի մեծ չափով տարածելու: — Խեղճ եկեղեցի, որ զինումներ է ստանում և գործելու ասպարէզ է ձեռք բերում միմիայն քաղաքականութեան գործիք դառնալու և նրա հեռաւոր նպատակներին ծառայելու:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բողոքական համայնքների միութեան ձգտումը, որի հետեանքն եղաւ «Գերմանական աւետարանական եկեղեցական կօմիտէի» հիմնարկութիւնը, վերջին ժամանակներս երեւան եկաւ նաև Ֆրանսիայում:

Ֆրանսիական բողոքականութեան չորս բաժանմունքները՝ «բողոքական եկեղեցիների գլխաւոր սինօդը», «բողոքական ազատ եկեղեցիների գլխաւոր միութիւնը», «Աւետարանական ազատ եկեղեցիների ունիան» և «Աւետարանական մէթոդիստական եկեղեցին» ցանկանալով հրապարակաւ յայտնել Ֆրանսիական բողոքական եկեղեցիների եղբայրական միութիւնը և ընդհանուր գործի յաջողութեան համար մի միացնող կապ հաստատել բողոքական եկեղեցիների մէջ, որոշեցին կազմակերպել Բողո-

քահան ֆէզերացիան» (դաշնակցութիւն): Իւրաքանչիւր եկեղեցու սկզբունքները, կարգապահութիւնը, պատարագը և կազմակերպութիւնը մնալու է անձեռնմխելի: Ֆէզերացիայի մերձաւոր նպատակն է լինելու դաշնակից եկեղեցիներէից իւրաքանչիւրի աղատութեան և իրաւանց պաշտպանութիւնն իշխանութեան առաջ: Նա կը նպաստի եկեղեցիներէ աւելի սերտ միութեան: Նրա վարչական մարմինն է լինելու «Բողոքական Դաշնակցութեան Խորհուրդը», որտեղ դաշնակից եկեղեցիներէից իւրաքանչիւրը կունենայ երկու ներկայացուցիչ: Դաշնակցական Խորհուրդը պարտաւորութիւն կունենայ. 1) դաշնակցութեան անունով պաշտպանելու իւր համայնքների շահերը. 2) հրաւիրելու հրապարակական միութեան ժողովներ, երբ որ այդ օգտակար կը ճանաչուի. 3) աջակցել դաշնակցութեան ոգու համապատասխան բոլոր ձեռնարկութիւններին և հովանաւորել ֆրանսիական բողոքականութեան բարոյական և սոցիալական ծգաւմները. 4) ջանալ դաշնակցութեան հետ միացնելու բողոքական և միւս եկեղեցիներ, որպէս զի այդ ձևով կարելի լինի ստեղծել ֆրանսիական բողոքականութեան ընդհանուր միութիւն:

Այս ծրագիրն արդէն կազմուած է և ներկայացրած գըլխաւոր միութեանց բարեհայեցողութեան:



ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՏԵԱՆ — ՀԱՅ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ

Ըստ Պրոֆ. Պ. Ննտէնի.

[P. Jensen. Hittitisch und Armenisch, Separat—Abdruck aus «Indogerman. Forschungen, Anzeiger» XIV Bd. 1—3. Heft;—«Die hittitisch armenische Inschrift eines Syennesis aus Babylon, Separat—Abdruck aus der Zeitschrift für die Deutsche Morganländische Gesellschaft, 1903, Heft II].

Հայ Ժողովրդի ծագումն մասին, յայտնի է, տարբեր են գիտնականների կարծիքները: Ինչպէս Հիւրչման (Armen. Gram-